



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆ ՏՆՈՅՆ ՈՐ ԻՆՍՒ ՊԱՆ” ԴՈՒԿ. ԵԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 1. 1877.

ԹԻՒ 9.

Ի Տ Ա Լ Ա Յ Ի Ք

Ո՞ր աղջ է և սա աղջիկը որ պատկերին մէջ գուարթ կ'երեւայ : Անոր փոքր եզրայրն այնչափ գէր է, որ կարծես թէ աղջկան թեւերը յողնած են և գետինը պիտի ձգեն տղան : Այս աղջիկը ոչ Հայ, ոչ թուրք և ոչ Պուլկար է : Յոյն աղջկան կը նմանի, բայց Յոյն ալ չէ, իտալացի է :

Իտալիա 700 մլն երկայն և 23 էն մինչև 330 մլն լայն երկիր է : Աշխարհացուցի մը նայելով պիտի տեսնէք որ իտալիա մատուրներուն ծայրովը Սիկիլիոյ զարնելու պատրաստ մեծ կոշկի մը կը նմանի :

Սարտենիա, Սիկիլիա, Գորտիգա, Էլպա և Մալդա կղզիներուն մէջ ալ իտալացիներ կը բնակին, բայց բոլոր այս կղզիք իտալիոյ կառավարութեան չեն վերաբերիր :

Քանի մը տարի առօջ իտալիա փոքր տէրութեանց բաժնուած էր, բայց 1859ին, 1860ին և 1866ին այլ և այլ պատերազմներէ ետքը այն փոքր տէրութիւնները վերցան, 1870ին նաեւ Հռովմ Պապէն հանուեցաւ, և բոլոր իտալիա միացաւ վիզդոր Էմմանուէլի թագաւորութեան ներքեւ : Հիմա իտալիա իբր 30,000,000 բնակիչ ունի :



Ի Տ Ա Լ Ա Յ Ի Ք ԱՂՋԻԿ ՄԸ

Հին բանաստեղծք կը գրեն թէ նախնի խաղաղիք հզոր, ժիր, դուարթ, աշխոյժ և երջանիկ ժողովուրդ էին. բայց երկար դարերէ հետէ խաղաղիք իրենց այն բարձրութենէն իյնալով ազգաստ, աշէտ, ախար և ծոյլ ժողովուրդ եղան: Սակայն այս վերջին տասը տարուան մէջ խաղաղիք դարձեալ սկսան յառաջանալ գրեւ և կարգաւ սորվելով և աշխատութեան վարժուելով, և խաղաղ տէրութիւնը երազայի մէջ հզոր տէրութիւն մը ըլլալու արդէն սկսած է:

Խաղաղ մէջ շատ գեղեցիկ քաղաքներ կան, և ամէն տարի աշխարհիս այլ և այլ կողմերէն շատ ճամբորդներ խաղաղ կու գան այն երկրին հնաթիւնները և գեղեցիկ շէնքերը տեսնելու:

**ՊԱՅՏԱԹ ԵՒ ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ՕԻ**

Ամէն մարդ պայծառ օղն աւելի կը սիրէ քան փոթորկալից օդը: Երբ արեւը կը փայլի, կարծես թէ աշխարհ կը ծիծաղի, իսկ երբ փոթորիկ կ'ելլէ, կարծես թէ աշխարհ սուգի մէջ կը մտնէ և կու լայ:

Տղայք ալ պայծառ և փոթորկալից օդոյ պէս երբեմն ուրախութիւն և երբեմն արամութիւն կը բերեն ընտանեաց: Երբ տղայք պուռ և լալ կը սկսին, տան մէջ եղողները կը տխրին, իսկ երբ կը խաղան, և անոնց դիմաց վրայ ուրախութեան նշոյլներ կը շողան, տան մէջ եղողները կը բերկրին:

Վերի պատկերին մէջ թէ՛ պայծառ և թէ՛ փոթորկալից օդոյ օրինակներ կը տեսնուին: Ստեփանիկ իր կառքը մանր մանր փայտի կտորներով լեցուցած է, և ձիերը լծելով կը խաղայ: Փոքրիկ Սրբուհին ալ իր փայտեայ օրորոցին մէջ պուռեցուցած է, և անով կը զուարճանայ: Այս երկու տղայք պայծառ օդոյ նման են: Բայց քիչ մ'ալ Յարութիւնին նայեցէք: Մայրը կը լուայ զանի, և մեծ սպունգով մը անոր երեսները կը սրբէ, իսկ Յարութիւնը գոհ չէ մերն այսպէս ընելէն, ուստի և կը պուռայ կը կանչէ: Յարութիւն փոթորկալից օդոյ նման է:

Այս տղաքներէն ո՞րն աւելի աղէկ է, այն որ կը պուռայ կը կանչէ, թէ այն որ հանգարտ կը խաղայ և ամենուն ուրախութիւն կը պատճառէ:

Տղայք, պատկերին ուշադրութեամբ նայեցէք, և այս տղայոց որուն ընթացքին որ կը հաւնիք, անոր հետեւեցէք:



ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ ԵՍՏԵՆԷՐ

**Պ Ո Պ**

(Եր. Աւետարանին 8 Լուսն:)

Դպրոցէն ետքը երբ Միս կօթըս տուն կ'երթար, ճամբան ձեան գնդակ մը անոր ականջին քովէն անցաւ: Միս կօթըս ետին նայեցաւ, և տեսնելով որ Պոպ և Լարի քիչ մը հեռուէն կու դային, հասկցաւ թէ ձեան գնդակն ուստի կու դար: Ի սկզբան Միս կօթըս չկարծեց թէ Պոպ դիտմամբ նետած էր ձեան գնդակը, բայց քիչ մը ետքը երկրորդ գնդակ մը գալով անոր ուսերուն դպաւ: Միս կօթըս այն միջոցին կարող չէր բան մը ընել, և հոն մարդ չկար որ անոր օգնէր: Ուստի սկսաւ արագ քալել, սակայն Պոպ և Լարի ևս իրենց քայլերը փութացուցին և սկսան գնդակներ տեղալ խեղճ կնոջ վրայ: Վերջապէս Միս կօթըս իր տանը դուռը հասաւ, և ահա այս միջոցին գնդակ մը անոր գլխոյն դարնելով քիչ մնաց զանի գետինը պիտի փռէր:

Միս կօթըս դրան առջև կենալով Պոպին ըսաւ. «Ներս եկու, հոս քեզի համար բան մը կայ»:

Պոպ Լարիի դառնալով ըսաւ. «Քեզի չըսի՞ թէ որչափ աւելի շարութիւն կ'ընենք, այնչափ աւելի կը սիրուինք: Եկու, ներս երթանք»:

Միս կօթըս ըսաւ, «Լարի թող չգայ, անոր համար բան մը չունիմ»:

Պոպ իբր թէ Լարին միթաբերու համար ըսաւ. «Դուն հոս սպասէ, քիչ մը ետքը ես ալ կու գամ, և քեզի հետ կը բաժնետո՞ ինչ որ Միս կօթըս ինծի կու տայ»:

Պոպ դառնուկի պէս քաղցրութեամբ Միս կօթսի երեսը նայելով տուն մտաւ:

Միս կօթըս սենեակ մը ցուցնելով Պոպի ըսաւ. «Այս սենեակը մտիր, հոն շատ գեղեցիկ բաներ պիտի տեսնես. քիչ մը ետքը ես ալ հոն պիտի գամ»:

Պոպ Միս կօթսի խօսքին անսալով սենեակը մտաւ, և սկսաւ հիացմամբ նայիլ հոն գտնուած գեղեցիկ բաներուն, և մինչ այս բաներուն վրայ իր կարծիքը յայտնելու կը պատրաստուէր, անգուր ձեռք մը ետեւէն անոր մաղբէն բռնեց:

Պոպ ձայն չհանեց, բայց հասկցաւ որ կիրակնօրեայ դպրոցաց մէջ չտեսնուած պատիժ մը կը կրէր: Պոպ չէր կրնար ոչ ալ և ոչ ձախ շարժիլ, վասն զի իւրաքանչիւր շարժում անոր ցաւը կ'աւելցնէր:

Մինչ Պոպ այս վիճակին մէջ էր, անոր ականջին և այտին սաստիկ ապտակ մը եկաւ, որ երկնից աստղերը համրել տուաւ Պոպին: Քիչ մը ետքը ուրիշ ապտակ մը անոր միւս ականջին և այտին եկաւ: Պոպ անշարժ մնաց, և սրտին ցաւէն ախանները կը կրճատէր:

Ամօթ կը համարէր լալ, ուստի անոր աչուքներէն արատաւք չեկան: Կռուկներ իրարու ետեւէ այնպէս արագ կ'ընէին որ Պոպ քիչ մնաց պիտի նուաղէր:

Երբ Միս կօթըս Պոպին կռուկներ տալէ յոգնեցաւ, զանի դէպ 'ի դուռը տանելով ըսաւ. «Պոպ, չեմ ուզեր որ Լարի դիտնայ թէ ձեռք կերար: Եթէ կը խոստանաս դունէն հանդարտութեամբ դուրս ելլել, մաղբեր թող կու տամ»:

Պոպ խօսք տուաւ այնպէս ընել, և աղատեցաւ:

(Պէտէ շարանախոս)

ԱՂՕԹԵԼ ԵՒ ՀՍԿԵԼ

Էտիմոլոգիկ մէջ դպրոցի մը աշակերտներէն փոքր տղայ մը, որ աղօթքի ժողովի մը ներկայ էր, ըսաւ իր վարժապետին. «Շատ կը փափաքիմ որ քոյրս Սուրբ գիրք կարդալու սովորի: Բնաւ Սուրբ գիրք չի կարդար»:

Վարժապետն ըսաւ. «Յովհաննէս, ինչո՞ւ կը փափաքիս որ քոյրդ Սուրբ գիրք կարդայ?»

Յովհաննէս պատասխանեց. «Վասն զի եթէ քոյրս անգամ մը Սուրբ գիրք կարդայ, վստահ եմ որ՝ շատ օգուտ պիտի տեսնէ, և դարձի գալով պիտի փրկուի:»

Վարժապետն ըսաւ. «Յովհաննէս, կը հաւատամ որ այնպէս կ'ըլլայ:»

«Այո՛, կը հաւատամ որ այնպէս պիտի ըլլայ» յարեց տղան, «և կը փափաքիմ որ դալ անգամ, երբ աղօթքի ժողով ըլլայ, խնդրէք ժողովրդէն աղօթք ընել որ քոյրս Սուրբ գիրք կարդալ սկսի:»

«Աղէկ, Յովհաննէս, այնպէս կ'ընեմ» ըսաւ վարժապետը, և յաջորդ ժողովին մէջ ըսաւ ժողովորդին. «Փոքր տղայ մը աղօթք կը խնդրէ որպէս զի իր քոյրը Սուրբ գիրք կարդալու սովորի: Ժողովին մէջ էր Յովհաննէս, բայց ծանուցումէն ետքը ելաւ գնաց: Վարժապետը խորհեցաւ թէ այնչափ բազմութեան մէջէն դուրս ելլել և ժողովը չփոթել անքաղաքավարութիւն էր, ուստի հետեւեալ օրն, երբ Յովհաննէս դպրոց եկաւ, վարժապետն ըսաւ անոր. «Յովհաննէս, երէկ աղօթքի ժողովի ատեն այնչափ բազմութեան մէջէն դուրս ելլելդ անքաղաքավարութիւն էր: Ո՛րք անգամ այսպիսի բան ընելու չես:»

Տղան ըսաւ. «Տէր, միտքս անքաղաքավարութիւն ընել չէր, խորհեցայ տուն երթալ և տեսնել թէ արդեօք քոյրս սկսած էր Սուրբ գիրք կարդալ:»

Այսպէս մենք ամենքս ակնկալութեամբ սպասելու ենք մեր աղօթից պատասխաններուն:

«Տէր, իմ խաւարս լուսի դարձու» ըսելէն ետքը լապտերով դուրս մի ելլէք, թէև գիտնաք թէ խաւար է:

Ի՞ՆՉ Է ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

ՀԱՒԱՏՈՅ ՄԷՋ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ «Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի» Մարկ. Ժ. 16:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՇՏԱԿԵՐՏ «Թէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճըշ-

մարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք:» Յովհ. Ը. 31:

ՎԱՐՈՒՅ ՄԷՋ ՍՈՒՐԲ «Չեր ամենուն . . . , Աստուծոյ սիրելիներուդ, սուրբ ըլլալու կանչումներուդ չնորհք ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէն:» Հռովմ. Ա. 7:

ԱԶԳԵՅՈՒԹԵԱՄԻ ԼՈՅՍ «Դուք էք աշխարհի լոյսը:» Մատթ. Ե. 14:

ԿՈՒՈՒՄ ԵՄԷ ԶԻՆՈՒՈՐ «Արդ դուն նեղութիւններու համբերէ՛ք՝ Քրիստոս Յիսուսի բարի զինուորի մը պէս:» Բ. Տիմ. Բ. 3:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԲԱՐԵԿԱՍՄ «Ասկէ ետքը ձեզ ծառայ չեմ անուաներ . . . հապա ես ձեզ բարեկամ անուանեցի:» Յովհ. Ժ. 15:

ՅԱՍԱՋ ԵՐԹԱԼՈՒ ԿՈՂՄԱՆԷ ՃԱՄԲՈՐԴ «Ասոնք ամէնն ալ հաւատաքով մեռան՝ խոստմունքները չառած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին, և խոստովանեցան թէ իրենք օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ:» Եբր. ԺԱ. 13:

ԱԶԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ ՈՐԴԻ «Նոյն ինքն հօգին վկայութիւն կուտայ մեր հօգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիքն ենք:» Հռովմ. Ը. 16:

ԱԿՆԿԱԼՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ ԺԱՌԱՆԳՆԵՐ «Եւ թէ որ որդիք, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգակիցներ:» Հռովմ. Ը. 17:


մը պատկաձե երկնցած սրածայր փուշերը կամ եղջիւրները կարծես թէ ձկնորսաց կ'ըսեն. «Մեզի մի դպչիք:» ձկնորսք չեն ուզեր այս ձուկերը բռնել, այլ ազատ կը թողուն զանոնք, վասն զի ոմանք կը կարծեն թէ այս ձկանց սրածայր փուշերէն բացուած վէրքերն անբուժելի են: Բայց այս կարծիքն ուղիղ չէ:

Հրածուկն ընդհանրապէս Սէյլան կղզոյն և Աւստրալիոյ կողմերը կը գտնուի, և թեև որ ըլլալով հեռուէն կը թուի թէ կը թռչի, բայց այնպէս չէ: Այս ձուկն ալ ուրիշ ձկանց պէս չուրին մէջ կը ըլլայ: Գիտունք ուզած են հասկնալ թէ ինչ նպատակաւ չինուած են այս ձկան թեւերը և սրածայր փուշերը, և ձուկերն աւելի ձօանջ դնելու համար անոնցմէ քանի մը հատ բռնելով Անգլիոյ թանգարանը բերած և հաս խաղարկութիւնները բրած են, բայց դեռ հասկցած չեն: Սակայն Աստուած որ ամէն բան իմաստութեամբ բրած է, գիտէ թէ այն ձկան թեւերը և սրածայր փուշերն ինչ բանի կը ծառայեն:

«ԵՐԱՆ» ԹԷ ԳՈՒ ՅՈՐԵՆԻ ԻՄՍ ԸԼԼԱՐ»

Երկրագործ մը որուն շտեմարանները ցորենով լի էին՝ ամէն օր կ'աղօթէր Աստուծոյ ըսելով, «Աղքատաց պէտքերը չնորհէ:»

Բայց երբ աղքատ մը գալով անկէ քիչ մը ցորեն կը խնդրէր, երկրա-



ԿԱՐՄԻ ՀՐԱԶՈՒԿ


Վերի պատկերին մէջ տեսնուած ձուկը զարմանալի է: Անոր ետեւ կող-

դործը կ'ըսէր աղքատին, «Գեղի տալու համար աւելի ցորեն չունիմ»: Սր մը երկրագործին կրտսեր որ-

դին տեսնելով որ հայրը կ'աղօթէր աղքատաց և կարօտելոց համար, աղօթքէն ետքը ըսաւ հօրը. «Հայր, երանի՜ թէ քու ցորենդ իմն ըլլար:»

«Որդեակ, դուն ցորենն ի՞նչ պիտի ընես,» հարցուց երկրագործը: Տղան պատասխանեց. «Եթէ քու ցորենդ իմն ըլլար, աղքատաց և կարօտելոց կու տայի, և այնպէս աղօթքներդ կատարած կ'ըլլայի:»

Այս աղուն հաւատքը հօրը հաւատքէն աւելի զօրաւոր և գործնական էր:



ՃՆՃՂՈՒԿ ՄՐ

ՃՆՃՂՈՒԿԱՆՑ ԽԵՆՔԸ

Ճնճղուկները որ պատերէն վար կախուած բաղեղներու մէջ բոյներ կը շինեն, իրարու օգնութիւն ընելու մէջ երբեմն շատ խելք կը ցուցնեն: Դեռ երէկ ներկայ գտնուեցայ տեսաւ ըստի մը որ մեծապէս զարմացուց զիս: Հիւանդ կամ խել ճնճղուկ մը դետին ինկած էր, և փողոցին մէջ թռչելով կը ջանար ապահով տեղ մը երթալ: Քանի մը ճնճղուկ ժողվուելով որպէս թէ կուգէին օդնել իրենց հիւանդ ընկերին, և ճուռուղելով ուրիշ շատ ճնճղուկներ ալ հրաւիրեցին հոն: Ճնճղուկներէն ոմանք հիւանդ ճնճղկան թեւերն իրենց վրայ առնելով ջանացին զայն տանել, սակայն կ'երեւի թէ չկրցան այնպիսի բեռով մը թռչիլ, ուստի անոնց ջանքն ի դերեւ ելաւ: Ասոր վրայ ճնճղկանց ճուռուղիւնն աւելցաւ. իբր թէ զիրար կը յանդիմանէին այս անյաջողութեան համար: Այն միջոցին ճնճղուկներէն ոմանք շուտով թռչելով գացին, և քիչ մը ետքը անոնց մէջ մին թղի մը երկայնութեամբ ոստ մը ունենալով բերանը ետ դարձաւ: Այս ոստը նետուեցաւ հիւանդ թռչչոյն առջեւը, և անոր երկու ծայրէն երկու ճնճղուկներ բռնելով քիչ մը վեր վերցուցին, հիւանդ թռչչունն ալ այն ոստին մէջտեղէն բռնեց, և միւս երկու թռչչոց օգնութեամբ կրցաւ հասնիլ բաղեղներուն մէջ, և այնպիսի եղաւ: Անտեսն միւս ճնճղուկներն ալ ուրախութեամբ ճուռուղելով անոր

ետեւէն գացին: Այս բանն իբր հինգ ժամ տեսց, և հոն ներկայ գտնուողները զարմանք դիտեցին այս տեսարանը, և ստուգութեանը վկայ են:

ՓՏԱՆ ԻՆՁՈՐԸ

Օր մը Կարապետին հայրը տեսաւ որ իր որդին քանի մը անկիրթ տղոց հետ կը խաղար: Հայրն արդէն ժամանակէ մը հետէ իր տղուն բարոյականին մէջ փոփոխութիւն մը կը նշմարէր, ուստի երբ տեսաւ որ որդին անկիրթ տղոց հետ կը խաղար, հասկցաւ այն փոփոխութեան պատճառը: Այն միջոցին շատ ցաւեցաւ, բայց բան չըսաւ իր որդւոյն: Երեկոյին պարտեղէն տասը խնձոր քաղեց, և զանոնք պնակի մը մէջ դնելով բերաւ Կարապետին: Կարապետ այս ընծային համար շատ ուրախ եղաւ:

Հայրը Կարապետին ըսաւ, «Խնձորները քանի մը օր պահէ որ հասնին,» և Կարապետ ուրախութեամբ զանոնք տարաւ պահեց մառանը:

Երբ Կարապետ խնձորները մառանը կը պահէր, հայրը ուրիշ խնձոր մ'ալ տալով որ քիչ մը փտած էր, ըսաւ. «Այս ալ միւսներուն հետ պահէ:» Կարապետ ըսաւ. «Հայր, այս խնձորը փտած է, եթէ միւսներուն քով դնեմ, զանոնք ալ կը փտեցնէ:» «Այնպէ՞ս,» ըսաւ հայրը, «տասը ողջ խնձորներ չե՞ն կրնար փտած խնձոր մը ողջ ընել:» Այս ըսաւ և մառանին դուռը գոցեց:

Ութ օր ետքը հայրը Կարապետին հրամայեց մառանէն խնձորները բերել: Երբ Կարապետ մառանը գնաց, ի՞նչ ցաւալի տեսարան ելաւ անոր առջեւ: Այն խնձորները որ ութ օր առաջ կարմիր և կըր էին, հիմա բոլորովին փտած և մառանը դէլ հոտով լեցուցած էին:

Կարապետ լալով և ողբալով հօրը քով եկաւ և ըսաւ. «Հայրիկ, ես քեզի չըսի՞ թէ փտած խնձորը միւս խնձորները պիտի ապականէ, դուն ինձ մտիկ չըրիր և այն փտած խնձորը ողջ խնձորներուն քով դրիր:» Ասոր վրայ հայրն ալ սկսաւ ըսել. «Որդեակ, ես ալ շատ անգամ քեզի ըսած չեմ թէ գէշ ընկերներն ալէկ բարքը կ'ապականեն, բայց դուն մտիկ չես ըներ իմ խօսքս, և գէշ ընկերներու հետ կը խաղաս: Արդ, խնձորներուն այս վիճակէն հասկցիր թէ ի՞նչ պիտի ըլլայ քու վիճակդ, եթէ

չարունակես գէշ ընկերաց հետ տեսնուիլ:»

Կարապետ բնաւ չմոռցաւ այս խրատը: Երբ շար տղայք կ'ուղէին անոր հետ խաղալ, Կարապետ միշտ մէկդի կը քաշուէր, և չէր ուզեր անոնց հետ բարեկամութիւն ընել:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ ՀԱՆԵԼՈՒԿ ՄՐ

Հանելուկը 22 գիրէ կը բաղկանայ: Հանելուկին 2, 15, 9, 17, 22, 12 և 13 գիրերը կը կազմեն Խորայելի ամենէն մեծ թագաւորն օժող անձին անունը:

13, 1 և 3 գիրերն Խորայելի տաւր յեղերէն կէսին մօրն անունը կը կազմեն:

14, 19, 8, 17 և 22 գիրերը կը կազմեն Խորայելացիներն Աւետաց երկիրը տանող անձին անունը:

5, 8, 18, 12 և 13 գիրերը Բենիամինի որդւոց միոյն անունը կը կազմեն:

7, 20, 10, 4, 15 և 16 գիրերը կը կազմեն անոր անունը որ արդար կոչուած է:

9, 3, 10, 13 և 15 գիրերը Սալ պաագի դատերաց միոյն անունը կը կազմեն:

3, 9, 7, 12 և 13 գիրերը կը կազմեն այն լրտեսներէն միոյն անունը զորս Մովսէս զրկեց Քանանու երկիրը:

11, 21, 6, 17, 18, 17 և 2 գիրերը կը կազմեն այն առաքելոց միոյն անունը որ սյակերպութեան ատենը մեր Տէրօջը քովը էին:

14, 17 և 18 գիրերը կը կազմեն Սուրբ Գրոց մէջ յիշուած ամենէն աւելի համբերող մարդուն անունը:

11, 3, 14, 12, և 13 գիրերը կը կազմեն այն կնոջ անունը որ բեւեռի մը միջոցաւ Խորայելացիներն ազատեց իրենց թշնամիներէն:

14, 19, 20, 2 և 12 գիրերը կը կազմեն այն ութ եղբարց հօրն անունը, որոնց ամենէն կրտսերն ընտրուեցաւ Աստուծոյ:

Այս հանելուկին բառերը կը կազմեն երկու զոյգ եղբարց անունները, որոնց կրտսերազոյններն աւելի մեծ ազգերու նախահայր եղան:

Ամերիկացի միտնոսարաց ընկերութեան կողմէն  
Թարգմար ձ. Գ. ԿԻԻՆ  
Ֆիլաճանճըլար Էօզուշու, Ամերիգան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԽ  
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ա. ՅԱԿՈԲ ԳՈՏԱՆՅԱՆ